«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1
www.aeb.am

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթղթով (այսուհետ՝ «Առաջարկ») սահմանվում են մրցույթի (այսուհետ, «Մրցույթ») պայմաններն ու կանոնները:

1.2. Մասնակցելով Մրցույթին՝ Դուք հայտարարում եք, որ լիովին և անվերապահ ընդունում եք Առաջարկի սույն պայմանները: Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային (գովազդային) միջոցառում:

1.3. Մրցույթը անցկացվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:

2. Մրցույթի ժամկետներ

2.1. Մրցույթն անցկացվում է 2023 թվականի օգոստոսի 18-ից ժամը 00:01-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը 23:59 Երևանի ժամանակով:

2.2. Մրցույթի արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի սոց կայքերի միջոցով:

2.3. Մրցույթի ամփոփման օրվա և ժամի (Երևանի ժամանակով) մասին բոլոր Մասնակիցները կծանուցվեն Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի, իսկ չունենալու դեպքում՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին՝ SMS միջոցով:

2.4. Մրցույթի ամփոփումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում հաղթողի հետ հաստատման անհնարինության դեպքում (Հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) կամ մրցանակից հրաժարվելու դեպքում Մրցույթի արդյունքները տվյալ հաճախորդի համար համարվում են ուժը կորցրած:

2.5. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կհրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, Երևանի ժամանակով ժամը 23:59:

2.6. Մրցանակների սերտիֆիկատները վավեր են Մրցույթի ամփոփումից սկսած 2 (երկու) ամիս ժամկետում:

3. Մրցույթի մասնակիցներ

3.1 Մրցույթին կարող են մասնակցել **Բանկի** AEB Guru **և** AEB Guru Travel (մրցույթի ժամկետի ընթացքում գործարկվելու դեպքում) **քարտապան հաճախորդները** (այսուհետ՝ Քարտապան), ովքեր 2.1 կետով սահմանված ժամկետում կկատարեն 4.2 կետով սահմանված պայմանները

3.2 Մրցույթին կարող են մասնակցել 18 տարին լրացած Քարտապանները, բացառությամբ Բանկի աշխատակիցների

4. Մրցույթի մասնակցելու կանոններ

4.1. Մրցույթի մասնակից դառնալու համար հարկավոր է Բանկի AEB Guru **կամ** AEB Guru Travel (մրցույթի ժամկետի ընթացքում գործարկվելու դեպքում) վճարային քարտի առկայություն:

4.2. AEB Guru և AEB Guru Travel քարտ/եր/ով հարկավոր է կատարել 50,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ գործարք (բացառությունները նկարագրված են Առաջարկի 4.4 կետում):

4.3. Մրցույթի 4.2-րդ կետով սահմանված պայմանը կատարած մասնակիցը (այսուհետ՝ Մասնակից) Բանկում իր գրանցված էլեկտրոնային փոստին կամ Բանկում գրանցված հեռախոսահամարին յուրաքանչյուր 50,000 ՀՀ դրամին համարժեք գումարի (գործարքների գումարային արժեք) դեպքում կստանա Մրցույթի մասնակցության մեկ անհատական կոդ:

4.4. Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները (ներառյալ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները), հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

4.5. Մրցույթի պայմանները չեն տարածվում հավելյալ և կից քարտերի վրա, և դրանցով կատարված գործարքները հաշվարկին չեն մասնակցում:

4.6. Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը (ՀՀ դրամով) կկատարվի հետևյալ սկզբունքով.

4.6.1 Քարտային հաշվի և գործարքի արժույթը նույնը լինելու դեպքում՝

- ՀՀ դրամի դեպքում՝ հաշվարկվում է գործարքի գումարի չափով
- Արտարժույթի դեպքում՝ ՀՀ դրամով արտահայտված արժեքը հաշվարկվում է Բանկում գործարքի ձևակերպման պահին ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով:

4.6.2 Քարտային հաշվի և գործարքի արժույթները տարբերվելու դեպքում ՀՀ դրամով արտահայտված արժեքը հաշվարկվում է Բանկում գործարքի ձևակերպման պահին քարտային գործառնությունների համար սահմանված փոխարժեքով:

4.7. Անկանխիկ գործարքների հաշվարկին չեն մասնակցում այն գործարքները, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ:

4.8. Բանկը հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

4.9. Բանկը պատասխանատվություն չի կրում POS տերմինալների և EPOS-տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի), անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված անկանխիկ գործարքների համար:

4.10. Բանկն իրավունք ունի հրաժարվել մրցանակներ տրամադրելուց, եթե Մրցույթի Մասնակցի կողմից կատարվել է Մրցույթի պայմանների խախտում և (կամ) զեղծարարարություն և (կամ) չարաշահում:

4.11. Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու դեպքում Մրցույթի արդյունքները տվյալ Քարտապանիի համար համարվում են ուժը կորցրած:

4.12. Մրցույթի հաղթողները տալիս են իրենց համաձայնությունը իրենց անունները/նկարները Բանկի պաշտոնական կայքում և (կամ) սոցիալական կայքերի պաշտոնական էջերին տեղադրելու հարցում:

5. Հաղթողների որոշումը, մրցանակները և դրանց հանձնումը

5.1. Մրցույթի հաղթողների համար նախատեսված մրցանակները հետևյալն են՝

- 1 հատ Մալդիվներ ուղևորություն՝ նախատեսված 2 անձի համար,
- 20 հատ AEB Նվեր քարտ՝ յուրաքանչյուրը 50.000 դրամ արժողությամբ,
- 3 հատ iPhone 15 սմարթֆոն*:

*Եթե մրցույթի ամփոփման ժամանակ iPhone 15 սմարթֆոնները հասանելի չլինեն հայկական շուկայում, ապա Բանկը հաղթողներին կտրամադրի հավաստագրեր՝ մինչև դրանց շուկայում հասանելի լինելը: Հաղթողների ցանկությամբ հավաստագրերը մրցույթի ամփոփումից հետո կարող են փոխարինվել iPhone 14-ով:

5.2. Մրցույթի Մասնակիցներից հաղթողներ կճանաչվեն պատահականության սկզբունքով՝ Քարտապաններին տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով:

5.3. Յուրաքանչյուր Քարտապան կարող է ստանալ ընդամենը 1 մրցանակ: Այն դեպքում, երբ հաղթողներին ընտրության ընթացքում կընտրվեն մեկ Քարտապանին պատկանող մի քանի անհատական կոդեր, ապա որպես հաղթող կճանաչվի միայն ըստ հերթականության վերջին դուրս բերված անհատական կոդը:

5.4. Հաղթող Քարտապանին Բանկը կտեղեկացնի հաղթող ճանաչվելու, Մրցանակները ստանալու և ամփոփիչ միջոցառման անցկացման վայրի ու ժամանակի մասին Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի և Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին՝ SMS միջոցով:

5.5. Մրցանակը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայրը՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

5.6. Հաղթող Մասնակցի՝ ամփոփիչ միջոցառմանը ներկա գտնվելու անհնարինության դեպքում ամփոփիչ միջոցառմանը կարող է մասնակցել լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

5.7. Մրցույթի, մրցանակների տրամադրման մանրամասները ճշտելու համար Բանկը կապ է հաստատում Հաղթողների հետ հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով: Բանկը կստանա կամ կպահանջի միայն այնպիսի անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ են համարում մրցանակը տրամադրելու և մարքեթինգային նպատակներով օգտագործելու համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Հաճախորդների անձնական տվյալների վրա տարածվում է Բանկի գաղտնիության քաղաքականությունը:

5.8. Ցանկացած լրացուցիչ գործողությունների համար և մրցանակի հետ կապված այլ ծախսերը կատարվում են հաղթողի կողմից:

6. Հաղորդակցման տվյալներ

6.1. Մանրմասն տեղեկատվության համար՝

- www.aeb.am
- Բանկի մասնաճյուղեր և Գլխամասային գրասենյակ
- Հեռախոսահամար՝ 86-86
- Սոցիալական կայքեր՝ Facebook, Instagram, Telegram